

րանը թէեւ չարունակեց իւր գործունէութիւնը, բայց Ձուղայեցւոյ ծրագիրը չիրականացաւ: Անոնք կը բաղձային ի Հոռոմ հիմնել Տպարան մը, որ լայն չափով գոհացում տար ուսումնական պիտոյքներու: Երբ բանակցութիւնները Ս. Ժողովոյն հետ ընդհատեցան, ձեռնարկեցին Ձուղայեցիք յանդուգն փորձը, ի Ձուղայ բանալ անձնական ճգամբք նոյն Տպարանը: 1640ին Խաչատուր եպիսկոպոս հրապարակ հանեց Հարանց վարքն եւ Ատենի Ժամագիրքը. ինչպէս կ'ըսուի ձեռնարկած էր նաեւ Աստուածաշունչի տպագրութեան, որ սակայն անաւարտ մնաց:

40. ՄՈՎՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻԲՐԵԻ ՄԱՏԵՆԱԳԻՐ

Ձեռք կրնար անձնաւորութենէ մը, որ բովանդակ կեանքը քարոզչական, ուսուցչական, շինարարական եւ վարչական գործունէութեան ասպարէզի վրայ մաշեց, պահանջել, որ նաեւ մատենագրութեան ընծայէր իւր տրիտուրը: Իր զրքերն են իր աշակերտները, իր շինարարական գործերը, ամբողջ հայ կեանքի վերազարթնումն եւ հայ Եկեղեցւոյ կազմակերպութիւնը:

Ձարմանալի է որ անոր ձեռքով գրուած եւ ոչ մէկ ձեռագիր ծանօթ է հրապարակի վրայ. թէպէտ կան անոր հրամանով գրուած գրչագիրներ:

Բայց եւ այնպէս կրնանք խօսիլ Մովսէսի զրական արտագրութիւններու վրայ, նկատու-